կան նաև կենսագրական համառոտ տեղեկություններ։

Բանաստեղծությունների թարգմանիչ Ալեք Խաչատրյանը իր ներածական հոդվածում համառոտ մի ակնարկ է դրում հայ գրականության դարավոր պատմության վրա, իսկ թեհրանարնակ բանասեր Թեյմուր Գուրգենը «Մանոթություն» բաժնում (էջ 1—21) գրականագիտական մանրամասն վերլուծության է ենթարկել հատընտիրում զետեղված բանաստեղծությունները։

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ

Երևանի տերիտորիայում 1965 թ. հնագիտական մի նոր հայտնաբերում կատարվեց Գերցենի փողոցում (Երևանի հյուսիսային մաս, Կիրգա), ճկվող կապույտի ֆաբրիկայի ու արհեստական այմաստների գործարանի և անասնաբուժական բազայի միջև, հողային աշխատանքներ կատարելու ժամանակ։ Որոշ ժամանակ անց այդ նույն վայրում, առաջին դամբարաններից մի քանի մետր հեռավորությամբ, բացվեցին նոր դամբարաններ[1]։

Դամբարանները հիմնականում ավերված են և այդ պարագան թույլ չի տալիս խոսելու նրանց կառուցվածքի մանրամասնությունների մասին։ Ակներև էր միայն, որ ուշ թաղումները կողքերից շարված էին քարերով՝ Թաղաքինդի ուշ թաղումների նմանությամբ[2]։

Կիսավեր դամբարանների ուսումնասիրությունը պարզեց, որ թաղումները կատարված էին գետնի մակերևույթից հաշված շուրջ 2 մետր խորության վրա։ Ուշ շրջանի դամբարաններից մեկում կատարված էր զույգ թաղում, մյուսներում՝ մեկական։ Թաղումներից մեկը կատարված էր հարավ-արևելքից՝ հյուսիս-արևմուտք կողմնորոշումով, մնացած դեպքերում կողմնորոշումը պարզել անհնար էր՝ դամբարանների խիստ վնասվածության պատճառով։

Հայտնաբերված իրերի ժամանակագրական խիստ տարբերությունը և տեղի բնակիչների վկայությունները այն մասին, թե տնամերձ հողամասերում և բակերում տնտեսական նպատակներով կատարած հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են տարբեր բնույթի հնագիտական առարկաներ, թույլ են տալիս կարծելու, որ հիշատակված դամբարանները մասն են կազմում ժամանակագրական լայն

1 Առաջին դեպքում դամբարանները տեղում ուսումնասիրվեցին և գտնված իրերը Հայաստանի պատմության թանգարան բերվեցին Ս. Ամիրյանի, երկրորդ դեպքում՝ Թ. Խաչատրյանի, Լ. Կարապետյանի և Ս. Ամիրյանի կողմից։

2 К. Х. Кушнарева, Тазакендский могильник в Армении, СА, 1960, էջ 137—138։

բնույթով ընդգրկում ունեցող (առնվազն 8 դար) բրոնզեդարյան բնադարձակ դամբարանադաշտի։

Այս ենթադրությունը փաստացի այլ նյութերով ամրապնդելու նպատակով կատարված տեղանքի զննումը, սակայն, ոչ մի արդյունք չտվեց. արտաքին նշանների բացակայությունը, ինչպես նաև տեղանքի բնակեցված լինելը բացառում են նոր դամբարաններ հայտնաբերելու և պեղելու որևէ հնարավորություն։ Այսուամենայնիվ առկա հնագիտական նյութը որոշակի հետաքրքրություն ներկայացնում է, որքանով համալրում է Երևանի տերիտորիայի հնագույն նյութական մշակույթը բրոնզի դարում։

Նկատելով մեր ձեռքի տակ եղած հնագիտական նյութի առանձնահատկություններից, հարմար ենք համարում դա երկու առանձին խմբով ներկայացնել։

Առաջին խումբը բաղկանում է մեկ դամբարանից ծագող երեք կավանոթներից։ Այս խմբի կավանոթներից առաջինը դեղնավուն կավից պատրաստված և կարմրով ներկված կճուճ է (աղյուսակ I, 1)։ Շուրթը կլոր է, դուրս ծալված։ Կավանոթի վերին կեսը հարուստ զարդանախշված է սև ներկով։ Առաջին գոտին ներկայացնում է երկու հորիզոնականներում պարփակված, զագաթով դեպի վեր ուղղված գծածածկ եռանկյունիներ։ Դրանից ներքև անցնում է հորիզոնական և ալիքաձև գծերի համադրությամբ գոյացած ժանյակաձև զարդագոտին։ Կավանոթը իրանի հատակին հարող մասում ունի 0,8 սմ տրամագծով մի անցք։ Երկրորդ կավանոթը երկկոն իրանով և դեպի ներս կտրված շրթով քրեղան է (աղ. I, 2)։ Կավը գույնով և բաղադրությամբ նույնն է, ինչ առաջին կավանոթինը, ներկված է բաց կարմրագույնով։ Զարդանախշը կրկնում է առաջին կավանոթի վերին զարդագոտին՝ գծածածկ եռանկյունիներ, այս դեպքում արված շագանակագույն ներկով։ Այս խմբի վերջին կավանոթը սև փայլով է, ունի կարճ վիզ, կլոր, դեպի դուրս լայնացող շուրթ, ուռուցիկ իրան (աղ. I, 3)։ Պարանոցի և իրանի անցումը ընդգծված է լայն խորադիր հորիզոնական գծով։ Դրանից ցած՝ իրանի կենտրո-

նական մասով անցնում է կետազարդ ոլորանախշ (մեանդր) զարդագոտին։

Նկարագրված կավանոթների երեք օրինակն էլ, չնչին տարբերություններով, հանդիպում են Հայաստանի նույնաշրջան հուշարձաններում և ներկայացվող մշակույթի հիմնական կողմերը կրողներից են։

Գունազարդ և կետազարդ խեցեղենի համատեղ հայտնաբերումներ կատարվել են բազմիցս և ամենատարբեր շրջաններում։ Այգպիսի հայտնաբերումները հատկապես բնորոշ են Հայաստանին և խիստ եղակի բնույթ են կրում նրա սահմաններից դուրս, այն էլ որպես մշակութային ազդեցության արձագանքներ։ Նման հուշարձանների թվում հիշատակելի են Մուխանաթ-թափայի[3], Թաղաքենդի[4], Լճաշենի[5], Հառիճի[6], Ապարանի[7], Թրիալեթիի[8], Ուզերլիկ-թեփեի[9], Պրիննևիի (Հարավային Օսեթիա)[10] և այլ հնավայրերը։

Եթե փնտրելու լինենք մեր կավանոթների ծագումնաբանական ակունքները մերձավոր վաղ շրջանի նյութական մշակույթի հուշարձաններում, ապա գունազարդ անոթներին ժամանակագրորեն նախորդող օրինակները կարող ենք գտնել Թազաքենդի և էլարի գունազարդ խեցեղենի հայտնի հավաքածուներում։ Թազաքենդի խեցանոթներից որպես այդպիսին կարելի է նշել № 13 դամբարանից հայտնաբերված քրեղանը, որը համահնչուն է Կիրզայի երկրորդ անոթին ոչ միայն ձևով, այլև զարդանախշով։ Կավանոթի վրա արված շախմատաձև նախշի, գագաթով միացած ղույգ եռանկյունիների տիպիկ

3 Ե. Բայբուրդյան, Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը, ՀՍԽՀ Պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք II, 1937, էջ 295։

4 К. Х. Кушнарева, Тазакендский могильник в Армении.

5 Հ. Հ. Մնացականյան, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 104։

6 Թ. Խաչատրյանի պեղումները, նյութը չի հրապարակված։

7 Т. С. Хачатрян, С. А. Есаян, Археологические находки в с. Апаран (Арм. ССР), СА, 1958, № 4, էջ 197 և հտ.։

8 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, էջ 85։

9 К. Х. Кушнарева, Новые данные о поселении Узерлик-тепе, около Агдама, МИА, 1965, № 125, էջ 93։

10 Նույն տեղում, էջ 98։

Թաղաքենդյան զարդաձևերի կողքին մենք տեսնում ենք գծածածկ և ցանցապատ եռանկյունիների մի շարք[11]։ Զարդաձևերի գրեթե նույն զուգորդումը առկա է նաև էլարի գունազարդ քրեղանների վրա (Հայաստանի պատմության թանգարան, այսուհետ՝ ՀՊԹ, գույք 1813/14, 2246/92)։ Սակայն Թաղաքենդում առկա են և մեր անոթներին ժամանակակից օրինակներ։ Թաղաքենդի խեցանոթների խմբի մեջ եղած նման անոթներից է № 1 դամբարանից ծագող երկշարք գծածածկ ռոմբերով զարդարված, խիստ ուռուցիկ իրանով, լայնաբերան կճուճը, որը ձևով ընդհանրանում է Կիրզայի գունազարդ խեցանոթներից առաջինին և ժամանակագրորեն շատ մոտիկ է նրան։

Կիրզայի խեցանոթները, սակայն, իրենց ուղղակի զուգահեռներն ունեն Լճաշենի հարուստ հավաքածուներում, մի հանգամանք, որը ոչ միայն դրանց համաժամանակյա գոյության հավաստիքն է, այլև Երևանի տերիտորիայի մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսի մշակույթը կապում է Լճաշենի մշակույթի հետ։ Այստեղի դամբարանային հավաքածուներից հենց միայն մեկի՝ № 38 դամբարանի խեցանոթները երևան են բերում գրեթե բոլոր այն էական կողմերը, որոնք կրում են Կիրզայի անոթները[12]։ Կավային բաղադրության, պատրաստման և զարդանախշերի անցկացման եղանակի ու տեխնիկայի նույնությունից զատ, Կիրզայի կավանոթները կրկնում են Լճաշենի անոթները նաև ձևով ու զարդանախշով։ Լճաշենի դամբարանի բաց կարմրագույն կճուճը՝ զարդարված գագաթով վեր ուղղված գծածածկ եռանկյունիներով (ՀՊԹ, գույք 2118/50), համապատասխանում է Կիրզայի առաջին անոթին, իսկ սև փայլով, կետազարդ ոլորանախշ և զիգզագներ կրող անոթը (ՀՊԹ, գույք 2118/37)՝ Կիրզայի 3-րդ անոթին։ Հետաքրքիր է նշել, որ նույն հավաքածուում եղած սև փայլով կետազարդ լայնաբերան մեծ կճուճը (ՀՊԹ, գույք 2118/46) մերձենում է Կիրզայի առաջին անոթին՝ հատակի մոտ ունեցած միջանցիկ անցքով։

Որպես զուգահեռ մեր 3-րդ անոթին կարելի է նշել նաև Լճաշենի № 45 և № 50 դամբարաններից հայտնաբերված կետազարդ ոլորանախշ կրող սև փայլով անոթները (ՀՊԹ, գույք՝ 2118/129, 2118/158, նկ. 1)։

Մեր իրերին համաժամանակյա Լճաշենի հավաքածուները Հ. Մնացականյանը դասակարգում է մեկ առանձին խմբի երրորդ ենթախմբում,

11 К. Х. Кушнарева, Тазакендский могильник в Армении, նկ. 2(6)։

12 Հ. Մնացականյանի պեղումները, նյութը չի հրապարակված։



Աղյուսակ I

Աղյուսակ II

խումբը ամբողջությամբ վերցրած ժամանակադրելով մ. թ. ա. XX—XVI դդ[13]։

Լճաշենի հրատարակված հավաքածուներից մեր իրերին շատ մոտ են կանգնած նաև № 6 դամբարանի խեցանոթները[14]։ Այստեղի գունազարդ անոթները, և հատկապես դրանցից մեկը, ձևով և հատակի մոտ ունեցած միջանցիկ անցքով նույնանում են Կիրզայի առաջին անոթին (ՀՊԹ, գույք 2009/280)։ Լճաշենի նշված անոթի ճիշտ կրկնօրինակը հանդիսացող մի կճուճ ծագում է Կոտայքի շրջանի Գողթ գյուղից (ՀՊԹ,

Նկ. 1

գույք 2250, աղ. 1, 12)։ Երկու կճուճներն էլ մեծ չափերի են, լայնաբերան, ուռուցիկ, գընդաձև իրանով և լայն հատակով, զարդարված են սև ներկով արված չորս հորիզոնական գծերով և դրանից ցած՝ գծածածկ ռոմբերի երկու

---

13 Հ. Հ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 104։

14 Է. Վ. Խանզադյան, Լճաշենի № 6 կուրգանը, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 2, էջ 65--77։

շարքով։ Գողթի կճուճը ևս իրանի ներքևի մասում կրում է փոքր տրամաչափի մի անցք։ Այս պարագան վկայում է տնտեսության մեջ դրանց ունեցած համասեռ դերի մասին[15]։

Կիրզայի կավանոթները իրենց զուգահեռները ունեն նաև Հայաստանի ու Անդրկովկասի մի շարք այլ հնավայրերում։ Զևով, զարդանախշով մեր իրերին արձագանքում են Էջմիածնի հնագիտական հավաքածուի (ՀՊԹ, գույք 556/21), Մուխաննաթ-թափայի[16], Բեշտաշենի ամրոցի[17], Ուզերլիկ-թեփեի լավ շերտագրված բնակավայրի վերին շերտերից (2-րդ և 3-րդ) և այլ վայրերից հայտնաբերված կավանոթներն ու դրանց բեկորները։

Վզի հիմքում ունեցած խորադիր հորիզոնական ակոսով, պարանոցի և շրթի դրվածքով Կիրզայի 3-րդ կավանոթին շատ մոտ է կանգնած նաև Երևանի տերիտորիայից ծագող (երրորդ մաս) և Երևանի Պատմության թանգարան վերջերս մուտք գործած կետազարդ կավանոթը (աղ. I, 13)։ Այս անոթը իր ուղիղ զուգահեռները ունի Լճաշենի վերը հիշատակված հավաքածուներում։

Գալով մեր կավանոթների վրա եղած զարդաձևերին, պետք է ասել, որ գծածածկ եռանկյունիները և ոլորանախշը տարածված զարդաձևերից էին դեռևս մ. թ. ա. III հազարամյակում և շարունակաբար լայն կիրառություն են գտնում ողջ բրոնզի դարի ընթացքում։ Խեցեղեն արտադրանքի տարբեր փուլերում փոխվում է միայն նույն զարդանախշը անցկացնելու տեխնիկան։ Որոշ ուսումնասիրողների կարծիքով գծածածկ եռանկյունիները, ոլորանախշը մի քանի այլ զարդաձևերի հետ միասին մոգական նշանակություն են ունեցել և դա շատ հավանական է թվում[18]։

Սև փայլեցված խեցեղենի կետազարդ զարդաձևերը, որպես կանոն, արված են ատամնավոր պտտաղրոշմի միջոցով։ Կիրզայի կավանոթի վրա ոլորանախշը արված է երկատամ պտտաղրոշմով, դա երևում է ոչ միայն երկշար զուգահեռ գծերի խիստ հավասարաչափ հեռավորությունից, այլև զարդանախշի ուղիղ անկյուններ կազմող հատվածներում նույն այդ գծերի երկուստեք հատումից։ Այդպիսի մի ատամնավոր պտտաղրոշմի նկարագրությունը տվել է Յա. Ր. Գումմելը, որով, ըստ նրա, արվել են Խանլարի հարավ-արևմտյան մասում պեղված № 12 դամբարանի մի շարք կավանոթների կետազարդ նախշերը[19]։ Խանլարի հիշյալ դամբարանի խեցեղենը իր զարդանախշով ընդհանրանում է նաև Կիրզայի սև փայլով անոթի հետ[20]։

Պեղումները և հնագիտական հարուստ նյութերի ուսումնասիրությունը ցույց են տվել, որ գունազարդ անոթներից շագանակագույն ներկով նախշվածները ժամանակագրորեն հաջորդում են սև ներկով նախշազարդված կավանոթներին[21]։ Կիրզայի կավանոթներից առաջինը, ինչպես տեսանք, նախշազարդված է սևով, երկրորդը՝ շագանակագույնով։ Գունազարդ խեցեղենի այս երկու նմուշների և սև փայլով կետազարդ անոթների համատեղ գտնվելը, ինչպես նաև բերված զուգահեռները, թույլ են տալիս քննության առնվող կավանոթները ժամանակագրել մ. թ. ա. XVII—XVI դդ.։

Կիրզայի հնագիտական իրերի երկրորդ խումբը բաղկանում է 18 բրոնզե առարկաներից և ութ կավանոթներից։ Ինչպես վերը նշվեց, դրանք ծագում են տարբեր դամբարաններից, սակայն նկատի առնելով իրերի ժամանակագրական ընդհանրությունը, հարմար ենք համարում դրանք ներկայացնել մի խմբում։

Բրոնզե իրերի թվում են՝ մեկ դաշույն, հինգ կոճակ, ութ ապարանջան, երեք մատանի և մեկ ասեղ։

Դաշույնը ձուլված է կաղապարով, ունի քիչ կլորացված ծայր, ուղիղ ուսեր, դաստակը ամրացնելու համար անցքով լեզվակ և նույն նպատակին ծառայող ու յուրաքանչյուր կողմից 6-ական անցք ունեցող բրոնզե գոտեկապ (աղ-

---

15 Մ. թ. ա. III հազարամյակի վերջերից և II հազարամյակի սկզբներից սկսած անցքով կավանոթները գործածության մեջ էին մինչև վերջերս։ Ծավալային չափերը, անցքի տեղադրումը, ձևը և այլ հատկանիշներ, ինչպես նաև աղգագրական զուգահեռները (Վ. Բդոյանի հավաքած նյութեր) թույլ են տալիս կարծելու, որ նման կավանոթները կապված են եղել հեղուկի ամենօրյա օգտագործման հետ։ Կավանոթների անցքերը ծորակների դեր են կատարել կավանոթում պահվող հեղուկի (ջուր, կաթ) համար։

16 Ե. Բայբուրդյան, նշվ. աշխ., էջ 289։

17 Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 112, աղ. CXXI։

18 М. В. Воеводский, К изучению гончарной техники первобытно-коммунистического общества на территории лесной зоны европейской части РСФСР, СА, 1936, № 1, էջ 74։

19 Я. И. Гуммель, Некоторые памятники ранней бронзовой эпохи Азербайджана, КСИИМК, вып. XX, 1948, էջ 26։

20 Նույն տեղում, էջ 26, տե՛ս նաև էջ 25, նկ. 11(3)։

21 Б. Б Пиотровский, Археология Закавказья, էջ 47։

II, 1)։ Դաշույնի շեղբը կտրվածքում սեղմված ռոմբի ձև ունի։ Նման դաշույնները ամենատարածված և բազմաթիվ տարբերակներ ունեցող իրերի թվին են պատկանում և հնագիտական գրականության մեջ հայտնի են սևանյան տիպի դաշույններ անունով։ Սրանք շատ հին ավանդներ ունեն, և իրավացի է Ս. Եսայանը, երբ կարծում է, որ այս տիպի դաշույնները վերածնումն են հնագույն դաշույնաշեղբերի, որոնք տարածված էին մ. թ. ա. III հազարամյակի վերջին քառորդից մինչև մ. թ. ա. XII—XI դդ.[22]։

Այս տիպի դաշույններ մեծ թվով հայտնի են Սևանի ավազանից[23], Կիրովականից[24], Վարդաքարից[25], Բեշտաշենից[26], Մինգեչաուրից[27] և այլ վայրերից։

Նշված դաշույնատեսակները հատուկ են մ. թ. ա. II հազարամյակի վերջերին և I հազարամյակի սկզբներին։ Ժամանակագրական հաջորդ փուլում (սկսած մ. թ. ա. IX դ.) սրանք շարունակում են մնալ գործածության մեջ, միայն բրոնզե դաշույնաշեղբերը փոխարինվում են երկաթով։

Մետաղե իրերից ուշագրավ են բրոնզե կոճակները։ Սրանք բոլորն էլ ներսի կողմից լցված են պինդ շաղախով և ունեն զգեստներին ամրացնելու կապոցակներ։ Կոճակներից երկուսը մեծ, երեքը՝ միջին չափերի են։ Առաջինները թե՛ զարդանախշով, թե՛ ձևով և թե՛ չափերով հար և նման են միմյանց։ Պետք է ենթադրել, որ դրանք ձուլված են միևնույն կաղապարով։ Ուռուցիկ մակերես և փված եզրեր ունեցող այս կոճակները աչքի են ընկնում պատրաստման լավ տեխնիկայով։ Ուռուցիկ մակերեսը զարդարված է խաչ գոյացնող գագաթով դեպի կենտրոն ուղղված չորս եռանկյունիներով։ Վերջիններս իրենց հերթին զարդարված են 6-ական միջանցիկ սեպերով (աղ. II, 2)։ Խաչ պատկերող այս տիպի կոճակները գործածականից զատ, խորհրդանշել են արևը և կապված են նաև արևի պաշտամունքի հետ[28]։ Այս տիպի կոճակներ մեծ թվով հայտնաբերվել են Արթիկի ուշ բրոնզի դարի դամբարանադաշտում մ. թ. ա. XIII—XII դդ. թվագրվող հավաքածուներում[29]։ Դրանք հանդիպում են նաև ավելի ուշ շրջանի հուշարձաններում։

Կոճակներից մյուսն ունի կոնաձև տեսք, եզրերում զարդարված է գնդաձև փոքր ելուստներով, որոնք ստացել են ատամնավոր ձևով արված եզրերը կոճակի վրա ետ ծալելու և ամրացնելու միջոցով (աղ II, 5)։ Մնացած մասում այն զարդարված է սանդղաձև դեպի կենտրոն բարձրացող համակենտրոն շրջանակներով։ Այս կոճակը ևս իր ուղղակի զուգահեռները ունի Արթիկում[30]։ Կոճակներից վերջին երկուսը պատրաստված են բրոնզե բարակ թիթեղներից։ Երկուսն էլ ունեն չափավոր ուռուցիկ մակերես։ Մեկը հարթ է, մյուսի եզրերը զարդարված են երկու ներքկված զուգահեռ գծերով (աղ. II, 3, 4)։ Ներկայացված կոճակները և սրանց տարատեսակները հազվագյուտ չեն ուշ բրոնզի դարի հնավայրերում։ Դրանք հանդիպում են նշված ժամանակաշրջանին հատուկ խեցեղենի և այլ առարկաների հետ միասին։ Կոճակներ գտնվել են Լճաշենի Ռեդկին լագերի, Շամշադինի մ. թ. ա. XIII—VIII դդ. վերաբերող հուշարձաններում։

Ավելի մեծ թիվ են կազմում հայտնաբերված ապարանջանները։ Ըստ ձևի և պատրաստման տեխնիկայի դրանք կարելի է երեք առանձին ենթախմբերի ստորաբաժանել։ Առաջին ենթախումբը բաղկանում է երկու ապարանջանից։ Սրանք պատրաստված են կտրվածքում կլոր, բարակ լարերից, որոնց ծայրերը միմյանց վրա են գալիս։ Երկրորդական մշակման են ենթարկված միայն ապարանջանների ծայրերը, որոնք տափակացվել են (աղ. II, 10)։ Երկրորդ ենթախմբի մեջ մտնում են հինգ ապարանջան։ Բոլորն էլ ձուլված են կավե կամ քարե կաղա-

---

22 С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966, էջ 59, 73։

23 Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 156, նկ. 109։ Վրաստանի պետական թանգարան, գույք՝ 20—05/3—2։ С. А. Есаян, Оружие и военное дело..., աղ. XIII(I)։

24 А. А. Мартиросян, Раскопки з Кировакане и некоторые памятники раннеурартского периода, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1956, № 9, նկ. 5։

25 Т. С. Хачатрян, Комплекс бронзовых предметов из сел. Вардакар, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1961, № 3, նկ. 4։ ՀՊԹ, գույք՝ 2109/6։

26 Б. А. Куфтин, նշվ. աշխ., նկ. 71։

27 Г. М. Асланов, Р. М. Вандов, Г. И. Ионе, Древний Мингечаур, Баку, 1959, աղ. XIV։

28 С. А. Есаян, Амулеты, связанные с культом солнца из Армении, СА, 1968, № 2, էջ 255։

29 Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1963, էջ 80—81, աղ. 6 (7—9)։ ՀՊԹ, գույք՝ 2255/151։

30 Նույն տեղում, էջ 81, աղ. 6(11)։ ՀՊԹ, գույք՝ 2255/281, 2327/310 և այլն։

.պարներում և երկրորդական մշակման են ենթարկված։ Ապարանջաններից չորսը պատրաստված են 0,4 սմ տրամագիծ ունեցող բրոնզե լարերից, որոնց ծայրերը սրվել են։ Ավելի մեծ տրամագծով և զանգվածեղությամբ աչքի է ընկնում ենթախմբի 5-րդ ապարանջանը (աղ. II, 9)։ Բոլոր ապարանջանների ծայրերը միմյանց վրա են գալիս։ Ծայրերի վրա և միջնամասում սուր գործիքով միմյանց հակադիր թեք գծեր են արված։ Նման ապարանջաններ մեծ քանակությամբ հանդիպում են մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջի և առաջին հազարամյակի սկզբի հուշարձաններում։ Դրանք ինքնին որոշակի ժամանակագրման չեն ենթարկվում և դրանց ժամանակագրական պատկանելությունը որոշվում է նրանց հետ հայտնաբերված մյուս նյութական արժեքների հիման վրա։

Նկարագրվածներից առանձնանում է հավաքածուի վերջին ապարանջանը։ Այն նույնպես ձուլված է կաղապարում և երկրորդական մշակման է ենթարկված։ Ավելի քան 2 սմ լայնություն ունեցող այս ապարանջանի արտաքին ողջ մակերեսը զարդանախշված է (աղ. II, 12)։ Եզրերը, որոնք ավելի հաստ են, պատված են ցորենի հասկը հիշեցնող հյուսվող զարդաքանդակներով՝ առնված զույգ զուգահեռների մեջ։ Սրանց միջև ընկած տարածությունը զարդարված է շեղ գծերով իրար միացող պարույրներով, կամ այսպես կոչված վազող պարույրներով, որոնք երկնակամարում արևի շարժման յուրովի վերարտադրությունն են հանդիսանում։ Ապարանջանի ճիշտ կենտրոնում վահանաձև զարդ կա, որը վերը հիշատակված կոնաձև կոճակի փոքրացված կրկնօրինակն է հիշեցնում։ Այս նույնությունը մի ավելորդ անգամ վկայում է հիշյալ իրերի նույնաշրջան լինելու մասին։ Ուշագրավ է նաև այն, որ նշված կոնաձև զարդը վերադիր է և հագցվել է ապարանջանի ձուլումից հետո, նրա կենտրոնում արված կլոր անցքի մեջ և ամրացվել գորշ գույնի ամուր շաղախով։ Ապարանջանի նկարագրված զարդաձևը շատ տարածված է ուշ բրոնզի դարում և վաղ երկաթի դարաշրջաններում։ Այն մենք տեսնում ենք Լճաշենի սայլերի, մի շարք վայրերից գտնված բրոնզե դոտիների և, ինչպես ստորև կտեսնենք, խեցանոթների վրա։ Նման ապարանջանների մի շարք օրինակներ հայտնաբերվել են մասնավորապես Արթիկի լավ ներկայացված դամբարանադաշտում[31], Այդպիսիք հայտնի են նաև Այրումից[32], Ալավերդուց[33] և այլ վայրերից։

Բրոնզե իրերի հավաքածուում եղած մատանիներից առաջինը պատրաստված է մետաղե լարից, որի ծայրերը հարում են իրար։ Մատանու ծայրերը զարդարված են եղևնաձև նախշով, ինչպիսին մենք տեսնում ենք ապարանջանների մի մասի վրա (աղ. II, 7)։

Մատանիներից երկրորդը օղաձև է, ձուլված է կաղապարով և երկրորդական մշակման է ենթարկված։ Կտրվածքում քառակող է (աղ. II, 6)։ Վերջին մատանին թիթեղյա է, ինչպես և երկրորդը ձուլված է կաղապարով։ Օղաձև այս մատանու արտաքին մակերեսը զարդարված է սուրանկյուն բեկբեկ գծով, որը միացնելով մատանու համեմատաբար հաստ եզրերը, մատանու մակերեսի վրա գոյացնում է խորադիր եռանկյունիներ (աղ. II, 8)։

Մետաղե իրերից վերջինը 12,5 սմ երկարությամբ բրոնզե ասեղ է (աղ. II, 13)։ Հետաքրքիր է ասեղի թելանցքի պատրաստման տեխնիկան։ Բրոնզե լարի այս ծայրը սառը կոփման եղանակով բարակացրել են, ապա թողնելով համապատասխան թելանցք, թեքել և մտցրել են իրանի վերնամասի երկարությամբ արված կտրվածքի մեջ, որից հետո ի մի են բերել կտրվածքի եզրերը, որով և կայուն ամրություն են հաղորդել ասեղի գլխիկին։ Ասեղները, որոնց հիմնականում ոսկրե նախօրինակները հայտնի են մ. թ. ա. III հազարամյակի հուշարձաններից, առավել մեծ տարածում են գտնում ուշ բրոնզի դարում և առկա են այդ շրջանի գրեթե բոլոր հնավայրերում։

Կիրզայի հնագիտական իրերի 2-րդ խմբի մեջ մտնող խեցանոթները ևս երևան են բերում այն բնորոշ ընդհանրությունը, ինչը հատուկ է Հայաստանի նույնաշրջան մշակույթներին ընդհանրապես և ուշ բրոնզեդարյանին՝ մասնավորապես։

Հայտնաբերված խեցանոթները, բացառությամբ երկուսի, պատրաստված են դրգի վրա և ունեն սև փայլ։ Դրանցից հինգը սափորներ են, երկար կամ կարճ պարանոցներով, դուրս ճկված շրթով ու զարդարված են ուղիղ և ալիքաձև խորադիր գծերով (աղ. I, 4—7, 10)։ Իր ունեցած զարդանախշով ուշագրավ է սափորներից մեկը, որի մի մասն է միայն պահ-

31 Նույն տեղում, աղ. IV (7—8)։ ՀՊԹ, գույք՝ 2255/15, 2327/145, 2327/387, 2327/559, 2327/615 և այլն։

32 Ս. Ա. Եսայան, Հայաստանի պատմության թանգարանի բրոնզե ապարանջանները, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 2, աղ. II, 10։

33 Նույն տեղում, աղ. II, 11։

պանվել (աղ. I, 7)։ Ալիքաձև և ուղիղ գծերից զատ այն կրում է դրոշմով արված համակենտրոն շրջանակներ, որոնք միացված են միմյանց շեղ գծերով։ Համադրելու դեպքում այս զարդաձևը գրեթե նույնանում է վերը բերված ապարանջանի վրա եղած զարդաձևին։ Նույն այս զարդաձևը և առավել շատ նրա առանձին տարբերակներն են կրում Հայաստանի տերիտորիայից ծագող բազմաթիվ խեցանոթները։ Նշված կավանոթին մասնավորապես մոտ են Արթիկի № 15 քարհանքի տերիտորիայից գտնված անոթները։ Այդ նույնությունը այնքան է ակնառու, որ պետք է ենթադրել, որ Կիրզայի օրինակը ևս իր ամբողջական վիճակում պետք է ունենար հյուսածո կանթ՝ ինչպիսին կրում է Արթիկի № 87 դամբարանի սափորը[34]։

Չնայած դրոշմով արված համակենտրոն շրջանակներ կրող խեցանոթների առկայությանը, առայժմ Հայաստանի տերիտորիայից չեն գտնվել դրոշմներ։ Եվ ընդհակառակը՝ դրոշմներ հայտնի են Հյուսիսային Կովկասում այն դեպքում, երբ առ այսօր բացակայում են դրանց միջոցով զարդարված խեցանոթները[35]։

Կավանոթների մեջ կան նաև սև փայլով մեծ թասի, գավաթ-կճուճի, ինչպես նաև սևագույն, ավազախառն կավից պատրաստված կոպիտ անոթի մեկական օրինակներ։ Թասը լայնաբերան է, ուղիղ դրված պատերով, կտրված շրթով, ընդգծված հատակով (աղ. I, 11)։ Շրթի տակ այն ունի անցք՝ կախելու համար։ Թասի շուրթը զարդարված է քառատամ գործիքի միջոցով արված ալիքաձև գծերով, իսկ իրանի վերին մասը զուգահեռ խորադիր գծերով։

Գավաթը, որը իրանի կենտրոնում կրում է մի կանթ, ունի դուրս ճկված շուրթ, օգտագործումից մաշված տափակ հատակ (աղ. I, 8)։ Զարդարված է երկու զուգահեռ և դրանց նկատմամբ թեր տեղադրված խորադիր գծերով։ Պատրաստված է ձեռքով։ Ձեռածեփ է նաև հավաքածուի վերջին կավանոթը, որն իրանի կենտրոնում և հատակային մասում զարդարված է եղունգավոր նախշով (աղ. I, 9)։ Նման կավանոթները հայտնի են խոհանոցային անվան տակ։

Ձծանրանալով նշված խեցանոթների զուգահեռների և դրանց առնչությունների հարցի վրա, նշենք, որ կավանոթների այս երեք տիպն էլ իրենց բազմաթիվ տարբերակներով հանդերձ մեծ թիվ են կազմում ուշ բրոնզի դարի և դրան հաջորդող շրջանի հնավայրերում։

Ինչ վերաբերում է Կիրզայի հնագիտական հավաքածուի 2-րդ խմբի ժամանակագրական սահմաններին, ապա ակներև է, որ այդ խմբի առարկաների մի մասը լայնորեն կապվում է մ. թ. ա. XIII—XII դդ. թվագրվող հուշարձանների հետ, այնինչ մի ուրիշ մասը նմանվում է մ. թ. ա. I հազարամյակի սկզբի նյութական մշակույթի առարկաներին։ Ժամանակագրական այս առնչությունները թույլ են տալիս Կիրզայի հնագիտական հավաքածուի 2-րդ խումբը ժամանակագրել մ. թ. ա. XII—IX դդ.։

Ս. ԱՄԻՐՅԱՆ

ԱՆՏԻԿ ԴԱՄԲԱՐԱՆ ԼԻՃՔՈՒՄ

1967 թ. Հայկական ՍՍՀ Մարտունու շրջանի Լիճք գյուղում հոր փորելիս բացվել է սալարկղային դամբարան, որտեղից հայտնաբերվել են ապակյա երեք սրվակ, կավե մի փոքրիկ պուլիկ և ոսկրե երեք զարդ։ Սևանի ավազանում տարբեր ժամանակներում մասնակի պեղումների շնորհիվ և պատահաբար գտնվել են անտիկ շրջանի դամբարաններ, սակայն այդ նյութերի միայն մի մասն է մեզ հասել, իսկ Լիճքից մինչ այժմ այդպիսիք հայտնի չէին։ Ժողովածուն հետաքրքիր է նաև նրանով, որ իրերից մի քանիսը առաջին անգամն են հանդիպում։

Առանձնապես ուշադրության է արժանի մանուշակագույն, հաստ ապակուց պատրաստված, գեղաձև իրանով երկկանթաթի սրվակը (նկ. 1), որի ամբողջ իրանն ու վիզը ծածկված են սպիտակ ու դեղնավուն խալերով (բարձր.՝ 9,5 սմ, հատ. տր.՝ 3 սմ, պս. տր.՝ 3,6 սմ)։ Սա նմանօրինակ զարդերով առաջին սրվակն է Հայաստանում։ Նրա խալերը չեն թափանցում սրվակի պատերով, ի տարբերություն millefiori (հազարան ծաղիկ) կոչվող անոթների։ Սրվակի մակերեսի խալերն այն տպավորությունն են ստեղծում, կարծես հեղուկ ապակին վրձինով շաղ է

34 Т. С. Хачатрян, Материальная культура..., էջ 120, աղ. XXIV, 5։

35 Е. И. Крупнов, Новые «пинтадеры» из сел. Сержень-юрт (Чечено-Ингушетия), Новое в советской археологии, М., 1965, էջ 194, նկ. 1, 3։ В. И. Козенкова, Исследование памятников раннего железного века у сел. Сержень-юрт (Чечено-Ингушетия), КСИА, М., 1967, № 112, նկ. 28(5)։